

Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

Մկրտիչ Արմեն

Առաջին կինը

Լիմարա հովտի վրա իջնում էր երեկոն: Արևը քիչ առաջ մայր էր մտել և քարանձավի մուտքի մի կողմում վառած մեծ խարույկի կրակն այժմ ավելի կարմիր էր թվում և ուժեղ: Հովիտն ամբողջովին արդեն թաղված էր ստվերի մեջ, փչել էր սկսել բավական ցուրտ, բայց մեղմ քամին:

Խարույկի շուրջը հավաքված բազմաթիվ եգեր ուշադրություն չդարձնելով քամուն և իրենց բոլորովին մերկ լինելուն, շտապում էին մինչև արունների որսից վերադառնալով վերջացնել իրենց աշխատանքը: Գետնի վրա գազանների մաշկեր փռած և այդ մաշկերի վրա սալաքարեր դրած, նրանք իրենց ձեռքի կտր քարերով ցորեն էին սղկում: Խարույկի մի կողմում առանձնակի նստած մի տարիքավոր եգ, մի ավելի մեծ սալաքարի վրա, որ դրված էր կրակի մեջ, հաց էր թխում:

Հովիտը մեծ էր, ասունների խումբը՝ փոքր, ուստի և կարելի էր ապրել: Իսկ որսն, ակներևութաբար, առատ էր, որովհետև քարանձավի մուտքի մյուս կողմում թափափված ու դիզված էին բազմաթիվ փոքր ու մանավանդ մեծ ոսկորներ, որոնցից ուժեղ փչում էր նեխման գարշահոտը:

Բազմաթիվ ծծկեր ասունիկները, խարույկից մի քիչ հեռու, մորթերի վրա պառկեցրած և մորթերով ծածկված, քնած էին: Ավելի մեծերը ճիչ ու ծիծաղով վազվզում և խաղ էին անում քարանձավում, դուրսը, ամեն տեղ:

Քարանձավի մուտքի առաջ, մտածկոտ հայացքն անորոշ կերպով դեպի հորիզոնը հառած, կանգնել էր եգ Թիանարան: Ո՛չ խարույկը, ո՛չ աշխատանքը, ոչինչ կարծես նրան չէր վերաբերում: Երբ ասունիկներն աղմուկով վազվզելիս երբեմն անցնում էին նրա մոտով, նրանք լռում էին մի պահ, լուրջ նայում և շտապում հեռանալ: Աշխատող եգերին բոլորովին չէր մտահոգում Թիանարայի չաշխատելը: Նախ, որ նրանք գլուխ էին հանում նաև առանց նրա, ապա, որ վարժվել էին այդ տարօրինակ եգի այդպիսի նոպաներին, և ապա, որ ոչ մի եգ և նույնիսկ արունները չէին սիրում նրան: Եվ եթե ասունները չէին վնդդել նրան իրենց խմբից, ապա պատճառն այն էր, որ, նախ՝ իրենք վատ չէին ապրում և ապա, որ Թիանարան ուտում էր շատ քիչ:

Թիանարան տգեղ էր: Չուներ ո՛չ ուժեղ ժանիքներ, ո՛չ մեծ ատամներ, որ անհրաժեշտ էր կիսախորոված միսը ծամելու համար, չուներ հաստ և ուռած շրթունքներ: Նա չուներ մեծ ստիկներ, որպեսզի կերակրեր ասունիկներին: Եվ դեռ հարց է՝ պարզա՞ն էր նա որևէ ասունիկ՝ ասունների խմբին: Ոչ ոք այդպիսի բան չէր հիշում: Եվ վերջապես, ոչ նրա փորն էր մեծ, որն անհրաժեշտ է միանգամից շատ ուտելիք կլանելու համար, ոչ ոտքերն էին մեծ, ոչ ձեռքերը: Միակ գեղեցիկ բանը, որ նա ուներ, դա նրա արտասովոր առատ և երկար մազերն էին, որոնք այժմ նա բերել-փայթաթել էր վզով և որոնցով ծածկել էր իր փոքրիկ ստիկները:

Ի՞նչ էր մտածում այդ եգը՝ իր այդպիսի նոպաներին՝ ոչ ոք չէր կարող ասել: Սպասում էր որևէ մեկի՞ն, որևէ բանի՞, փոթորի՞կ էր հասկանում, լուսի՞ն էր գուշակում, տաք գիշերի՞ց էր ուրախանում, մոտեցող գազանի՞ց էր վախենում, թե՞ ուրիշ բան... Իր տգեղ, փոքրիկ ձեռներով, որ կարծես ստեղծված չէին ցորեն սղկող քար բռնելու համար, նա անզգայաբար, մերթ-մերթ շոյում էր իր այլանդակ լայն ճակատը, կարծես դրա ետևում ծնված ինչ-որ մեծ միտք խանգարում էր նրան՝ ապրել մյուս ասունների պես: Նրա անդուրեկան կերպով խոշոր աչքերում այնպիսի թախիծ կար նստած, կարծես մի ձեռքամատների չափ օրեր նա որսի միս չէր խժռել: Նրա բոլորովին անմազ մարմնի զարշելի սպիտակ մորթը, որ կարծես արև չէր տեսել, ժամանակ առ ժամանակ դողում էր և ցնցվում, կարծես հեկեկալով՝ աչքերի փոխարեն:

Հեռվից, շատ հեռվից քամին բերեց մոտեցող արունների հագիվ լսելի ձայները: Թիանարան սթափվեց, տհաճորեն շարժեց շրթունքները: Ոչ, արուններին չէր սպասում նա:

Խարույկի մոտ նստած եգերը լարեցին լսողությունը: Հաղթության ե՛րգ էին գոռում արունները, թե՛ քաջալերում էին իրար՝ որսը քարշ տալու, թե՛ պարզապես եգերին լսելի էին դարձնում իրենց

մոտենալը: Ինչ էլ որ լիներ, նրանք բարձր տրամադրության մեջ էին: Ուրախացան նաև Էգերը: Ավարտելով աշխատանքը և օգնելով տարիքավոր Էգին՝ թխել վերջին հացերը, նրանցից ոմանք սկսեցին ձեռքերն աչքերին հովանի արած նայել դեպի հորիզոնը, ոմանք՝ պարել ինչ-որ ցատկոտող ու ծամածռվող պար, իսկ ոմանք ճմլկոտվելով պառկեցին խարույկին շատ մոտ՝ սպասելով արուներին:

Նրանք երևացին: Գալիս էին արագ, բայց հեռավորությունը մեծ էր և թվում էր, թե նրանք քայլում են մանր: Հաճախակի ցած էին դնում իրենց բեռը և փոխանակ հանգստանալու, պարում էին՝ վերվեր թռչկոտելով: Նրանց ետևից, կրնկակոխ, վրա էր հասնում մուլը:

Տեսնելով նրանց, ասունիկները բոլոր կողմերից ճիչ ու կանչերով նետվեցին դեպի նրանց: Դեռ շատ ժամանակ խարույկի մոտից երևում էր, թե ինչպես նրանք վազում էին ու ընկնում, ընկնում ու բարձրանում, հանգստանում ու նորից վազում, մինչև որ, վերջապես, հասան և խառնվեցին արուներին:

Խուլմբը մոտեցավ: Արուները բերում էին սպանված երեք մեծ գազան և մի ձեռքամատների քանակությամբ՝ մանրերը: Ուրախությունը խլացուցիչ էր: Մազակոլով արուները, ցած դնելով որսը, անմիջապես նետվեցին դեպի Էգերը և մի-մի հատ խլելով, տարան դեպի գանազան կողմեր: Բայց Էգերն ավելի քիչ էին, քան արուները: Ասունիկները, առանց ուշադրություն դարձնելու նրանց վրա, գնում էին սպանված գազանների աչքերը, ժանիքները, պոչերը:

Թիանարան կանգնած էր առաջվա նման, ամեն ինչին անհաղորդ: Նա դեռ նայում էր հեռու հորիզոնին: Նա չնկատեց, թե ինչպես անեզ մաացած արուներից մի քանիսը մոտեցան նրան՝ կատարելով, իհարկե, մեծ շնորհ, որովհետև նա ոչ մեկին դուր չէր գալիս: Տեսնելով, սակայն, նրա անուշադրությունը, քիչ հետո նրանք հեռացան անտարբեր, հեռացան բոլորը, բացի Վաբուից:

Վաբուն երիտասարդ էր, անփորձ և նույնպես տգեղ: Նա գիտեր, որ ոչ մի Էգ չի հավանում իրեն: Նրա կարճ թևերը, որ կախ զցած վիճակում չէին հասնում նույնիսկ մինչև ծնկները, նրա անկանոն գլուխը, որի ոչ թե ներքին, ծնոտային մասն էր վերինից, գանգից մեծ, այլ, ընդհակառակը, նրա վերջավորությունների սակավամագ լինելը,— այդ բոլորը վանում էին նրանից ասունախմբի Էգերին: Ճիշտ է, նա շատ ուժեղ էր և կարող էր հաղթել մյուս արուներից յուրաքանչյուրին՝ խլելով Էգը նրանից, բայց ամաչում էր: Եվ որովհետև ոչ ոք չգիտեր, թե ինչ է ամաչելը, ուստի և դա նույնացնում էին երկչոտության հետ:

Երբ Թիանարան պատահաբար բարձրացրեց գլուխը, նկատեց Վաբուին, որ մի քիչ հեռու կանգնած, անվստահ նայում էր նրան: Էգի մեջ ծագեց խղճահարությունը: Դժբախտ արուն, ըստ երևույթին, երբեք Էգ չէր ունեցել: Թիանարան չէր հիշում, թե նրան տեսած լիներ որևէ Էգի հետ:

— Վաբու,— ձայն տվեց Թիանարան: Նրա ձայնը ևս անախորժ էր, զուրկ՝ ասուններին հատուկ խռպոտությունից:

Վստահություն առած, Վաբուն մոտեցավ և կանգնեց Էգի դիմաց:

Թիանարան նայեց նրան՝ ոտից գլուխ, ուշադիր, մտածկոտ, կարծես կշռադատելով: Ապա ասաց առանց բարկության.

— Ինչո՞ւ ես կանգնել, գնա: Հիմա ազատ Էգեր շատ կան:

Վաբուն չպատասխանեց:

— Գնա,— այս անգամ բարկանալով, ասաց Թիանարան:

— Բեզ եմ ուզում,— ասաց Վաբուն հանկարծակի վստահությամբ և կամակոր:

— Ի՞նչ...

— Ոչ մի արու քեզ չի ունենում: Ես կունենամ: Դու լավ ես: Ես ուրիշ Էգ չեմ ունենա...

Թիանարան ցնցվեց և խոշոր բաց անելով իր առանց այն էլ խոշոր աչքերը, նայեց Վաբուին այնպիսի հայացքով, ինչպես նայում էր հորիզոնին քիչ առաջ:

Արուն նետվեց դեպի Էգը:

Թիանարան երկու ձեռքերը Վաբուի ուսերին դնելով՝ դիմադրեց, տխուր ու խելացի հայացքով սաստեց նրան:

— Դու ուրիշ ես,— շարունակեց Վաբուն աղերսանքով,— դու երկնքի պես ես: Ոչ մի արու քեզ չի ունենում: Ես կունենամ.. .

Թիանարան, որ դեռ բռնել էր արուի ուսերից, արագ հառեց իր հայացքը նրա աչքերին և ուշադիր երկար նայեց: Ապա բաց թողեց նրա ուսերը, ավերը դրեց իր ճակատին, աչքերը փակեց: Նա տանջվում էր: Նա ճգնում էր մտածել: Նա ճգնում էր հասկանալ: Նրա ամբողջ մարմինը ցավում էր մտածելու գործից: Վերջապես ըմբռնեց, որ Վաբուն իրեն մոտ եկել է ոչ թե որպես մերժված՝ մերժվածի մոտ, այլ որ հավանում է նրան մյուս եզերից ավելի: Նրա մարմինը ցնցվեց բավականությունից: Նա ժպտաց: Դա նոր բան էր ասունների մոտ: Ոչ ոք չգիտեր ժպտալ: Արուն նայեց ապշած:

Արդեն բոլորովին մոլթն էր: Զարանձավի մուտքի կողքին, աղմուկի ու ժխորի մեջ, հուրհրատում էր մեծ խարույկը, և գալիս էր խանձվող մսի հոտը: Բոցի լույսն անհանգիստ թրթռում էր Թիանարայի և Վաբուի մերկ մարմինների վրա: Բայց նրանք չէին տեսնում ոչինչ՝ բացի իրարից:

Հանկարծ ժպտը սառեց Թիանարայի շրթունքների վրա, նա սկսեց մտածել: Միտքը սուր ծակեց նրա ուղեղը և անհետացավ: Էզը փորձեց բռնել այն: Երկար ժամանակ այդ չէր հաջողվում: Ինչպես ձեռքով բռնած ձուկ, այն դուրս էր պրծնում մերթ փական թռուցքի մի կողմով, մերթ մյուս: Վերջապես կաշկանդեց: Այժմ հարկավոր էր արտահայտել այն:

Բավական ժամանակ անցավ, մինչև որ Թիանարան կարողացավ ասել.

— Ոչ մի եզ քեզ չի ունենում: Ես կունենամ: Դու լավ ես: Դու արևի պես ես: Ես ուրիշ արու չեմ ունենա.. .

Վաբուն բարձր ծիծաղեց, ինչպես բոլոր ասունները, և սկսեց խելահեղ պարել վեր-վեր թռչող մի պար: Բայց նրա աչքերը հանդիպեցին Թիանարայի թախծոտ աչքերին և կիսատ մնաց ծիծաղը, կիսատ մնաց պարը:

Էզը նորից բռնեց արուի ուսերից, ուղիղ նայեց նրա աչքերի մեջ, բայց ոչ թե աչքերի մակերեսին, այլ դրանց խորքը: Կարծես միտք էր փնտրում դրանց հատակում: Կարծես ուզում էր ըմբռնել՝ հասկացա՞վ Վաբուն նրան, թե ոչ: Ապա, ոչինչ չեզրակացնելով, բաց թողեց նրան և միայն ասաց.

— Մի ծիծաղիր և մի պարիր, ինչպես բոլոր ասունները: Դու ուրիշ ես.. .

— Չեմ ծիծաղի և չեմ պարի,— ասաց Վաբուն:— Բայց ես լավ էի,— արդարացավ նա,— ես լավ էի, դու ինձ արև ասացիր.. .

— Ա՛յ,— բացականչեց Թիանարան՝ աննախընթաց ուրախությունից սարսափած.. . — Ա՛յ.. . Դու ինձ հասկացար.. .

Եվ գրկելով Վաբուի գլուխը, ինքն էլ չգիտենալով ինչու, իր երկար մազերը փռեց նրա երեսի վրա: Վաբուն ձայն չհանեց:

«Ես, դու, ինձ, իմ» և նման խոսքեր առաջին անգամն էին ինչու ասունների բերանում: Ոչ ոք չէր գործածել դրանք: Ոչ ոք չէր հնարել դրանք, բայց Թիանարան ու Վաբուն հասկանում էին իրենց իսկ հնարած անձանոթ այդ խոսքերը:

Երեկոյան խնջույքից փորերն անասելի ուռած և կլորացած, ասունները մեկ առ մեկ սկսեցին մտնել քարանձավ՝ քնելու: Էզերը լեշերի պես քարշ էին տալիս արդեն քնած կամ կիսաքուն ասունիկներին: Անցնելով Թիանարայի ու Վաբուի մոտով, ոչ մի ասուն ուշադրություն չէր դարձնում նրանց վրա, ոչ մի արուի մտքով չէր անցնում կորզել Թիանարային. ոչ մի Էզի մտքով չէր անցնում գրավել Վաբուին:

Երբ նորից նրանք մնացին մենակ, Վաբուն իր գլուխն ազատեց Էզի մազերի տակից և ասաց.

— Թիանարա, գնանք այստեղից:

Եվ նա Էգին տարավ դեպի քարանձավի մուտքի այն կողմը, որտեղ ոսկորներն էին կուտակված և ցիրուցանված:

— Ես վախենում եմ,— ասաց Թիանարան,— մուլն է, գազան կգա...

— Ես քեզ հետ եմ, Թիանարա:

— Ոսկորները հոտ են խոսում,— ասաց Էգը՝ քիթը զգվանքից վեր քաշելով:

Վաբուն զարմացավ: Հոտը, որին նա սովորել էր բոլորի պես, սովորել էր վաղուց, այժմ նրան ևս թվաց վատ: Նա ասաց.

— Գնանք ավելի հեռու: Իսկ մյուս արևին ես ոսկորների վրա հող կդնեմ, որ հողը կուլ տա հոտը:

Նրանք հեռացան ևս մի քիչ: Քամին, որ փչում էր դեպի ոսկորները, տանում էր դրանց հոտը հեռու, դեպի խարույկը: Արուն և Էգը սրսփացին ցրտից: Բայց Թիանարան, իր մրսելն անտեսելով, ասաց.

— Երբ արև լինի, ես քեզ համար գազանի մորթ կանեմ, որ չմրսես: Ես գիտեմ գազանի մորթ անել: Ոչ ոք չգիտե:

Շուրջը խոտեր էին և ծաղիկներ: Նրանք կանգնեցին: Հեռու խարույկն այժմ նրանց լուսավորում էր չափազանց աղոտ: Միայն նրա աչքերն էին փայլում մթության մեջ:

— Ի՞նչ ես ուզում, Թիանարա,— խնդրեց Վաբուն:

Էգը չհասկացավ:

— Ուզո՞ւմ ես սպիտակ որս: Արդեն ձեռքամատների չափ ու ձեռքամատների չափ ու էլի ձեռքամատների չափ արև է, որ չենք որսացել: Ես կգտնեմ քեզ համար... Ուզո՞ւմ ես... — Նա լռեց և պակասող բառերը ցույց տվեց ձեռքերի շարժումներով,— անտառի քաղցր միրգ... Ես կգտնեմ քեզ համար:

— Չեմ ուզում,— ասաց Թիանարան:— Նրա թախծոտ ու մտածկոտ աչքերը սևեռված էին մթությանը: Նայելով այդպես երկար, նա հանկարծ երկու ափերով ուժեղ խփեց ճակատին, կարծես սարսափած, որ այնտեղ նորից ծագեց միտքը: Նա նույնիսկ հեծեծաց ֆիզիկական ցավից, ափերն իջեցրեց աչքերի վրա և գլուխն արագ օրորեց աջ ու ձախ: Բայց աստիճանաբար նա դանդաղեց, ապա անշարժացավ մնաց այդպես՝ շատ երկար: Երբ ձեռքերն իջեցրեց վար, նրա աչքերը ժպտում էին և լիքն էին մտքով: Նա ասաց.

— Ես ուզում եմ, Վաբու: Ես ուզում եմ, որ դու ինձ ունենաս, ես քեզ ունենամ... Ես ուզում եմ, որ դու ուրիշ Էգ չունենաս, ես ուրիշ արու չունենամ: Արու, Էգ, Վաբու, ունենաս, չունենաս, ասուն, ես...

Նա խառնեց: Ժպիտը կորավ աչքերից: Նա փնտրում էր: Նա մռայլվեց: Վաբուն նայում էր սպասողական, կարծես ուզում էր օգնել նրան, բայց չգիտեր ինչպես: Նրա հայացքը խանգարում էր Թիանարային՝ գտնել: Էգը փակեց աչքերը, բայց մի պահ անց, անչափ ուրախացավ, բաց արեց.

— Ես ուզում եմ, որ դու էլ ուզես, որ Թիանարա ու Վաբու լինի...

Վաբուն հասկացավ անմիջապես: Նա ասաց.

— Թող ես գազան չուտեմ,— գազանն ինձ ուտի, եթե... — Նա չկարողացավ բառը գտնել և շարունակեց,— թող խարույկի ճյուղը երկնքից ինձ վրա խփի... Թող ես հող պառկեմ...

Թիանարան վախեցավ և շտապեց լռեցնել Վաբուին: Նա հավատաց: Ընդհուպ մոտենալով նրան, Թիանարան բռնեց նրա ուսերից, նայեց սովորականից փոքր նրա ծնոտին, խոշոր կզակին, մեծ գանգին, որտեղ կարծես մի այնպիսի բան կար, որ չկար ուրիշ ասունների մոտ, և որի համար այնպես մենակյաց, տխուր և ամաչկոտ էր Վաբուն, նայեց նրա միտք պարունակող աչքերին, ապա շրթունքներին, և առաջին անգամ Լիմարա հովտում, առաջին անգամ ասունների մոտ, կատարվեց մի բան, որը դեռևս չունեի անուն. նա համբուրեց:

Երկրագնդի վրա, Էգերի միջից, ծնվեց առաջին կինը:

1946